

Թուած պետութիւններու շարքում — ա՛յն աստիճան հիւժուած է, տկարացած իր երկարատեւ պատերազմներէն, որոնք գրեթէ անընդհատ տեւեցին 1910 թուականէն (Ռուսիոյ հետ Աֆրիկայում) մինչեւ 1922-ը (Թիւրք-յունական պատերազմ) :

Վայրկեան մը յոխորտաց եւ թուրը ճօճեց Անգլիոյ դէմ, բայց խոհեմաբար յետ քաշուեցաւ, տեսնելով Մուսոլինիի խորհրդաւոր շարժումները . . .

Յամենայն դէպս, Թիւրքիան առայժմ պինդ փարած է Մոսկուային — որմէ սակայն միշտ ալ կը վախնայ — եւ նուիրուած է ներքին շինարարութեան: Ռուս-թրքական «բարեկամութիւնը» անգամ մը եւս նուիրագործուեցաւ երկու պետութեանց ա. դ. նախարարներու վերջին հանդիսաւոր տեսակցութեամբ, որ տեղի ունեցաւ Օդեսսայի մէջ:

Ռուսաստանը կը հրահրէ շարունակ քեմալիստները դէպի ըմբոստացում ընդդէմ Համաձայնութեան պետութիւններու («Անտանտ») , մասնաւորապէս ընդդէմ Անգլիայի — եւ կը յաջողի մինչեւ յայտնի աստիճան մը: Մինչեւ օրս Թիւրքիան չէ մտած Ազգերու Դաշնակցութեան մէջ: Բայց միւս կողմէն՝ չէ ալ մտած միանգամայն Ռուսիոյ ազդեցութեան շրջանի մէջ, նախանձախնդիր է իր անկախութեան եւ անխնայ կը հալածէ կոմունիստներն ու կոմունիզմի պրոպագանդը իր սահմաններում: Մոսկուան կը համակերպի այդ «ըմբոստ» քայլերուն, վախնալով թերեւս, որ հակառակ պարագային Մուստաֆա Քեմալի կառավարութիւնը կրնայ Անտանտի դիրքը նետուիլ:

Միւս կողմէն՝ Թիւրք-գերմանական յարաբերութիւնները կը մնան ըստ առաջնոյն ջերմ բարեկամական:

Ռուսաստանը կը հրահրէ Թիւրքիան, կը հրահրէ եւ Գերմանիան ընդդէմ նոյն Անտանտի, խաղալով միշտ նոյն լարի վրայ .

— «Մենք ընդհանուր թշնամիներ ունինք եւ անոնց հանդէպ պէտք է մնանք միաբան»:

Ռուսաստանը շարունակ հաւա՞ր կը կոչէ, թէ Անգլիան կը դաւէ իր դէմ, թէ բոլոր դաշինքներն ու համաձայնութիւններն իր դէմ են ուղղուած, թէ անգամ Լօբարնոյի ամբողջ պատմութիւնը Անգլիոյ խաղն է, թէ Չեմբեր-

լէյն կ'ուզէ սիրաշահիլ Գերմանիան՝ անոր հետ միասին հակասովետական դաւեր նիւթելու եւայլն:

Եւ մինչ Անտանտը Լօբարնոյի մէջ կը խորհրդակցէր Գերմանիայի հետ, Չիչերին հեւի-հեւ կը զարնէր բոլոր դռները գերման մայրաքաղաքում, կը ներկայանար անգամ միապետական Հինդենբուրգին, օրհասական ճիգեր կ'ընէր, որպէսզի Գերմանիան չնետուի Անտանտի դիրքը, հաւատարիմ մնայ Ռապալոյի համաձայնութեան ոգուն, հեռու պահուի Ազգերու Լիկայէն եւայլն:

Եւ Բեբրինի մարդիկ կը պատասխանէին ջերմազին հաւաստիացումներով՝ թէ գերմանո-ռուս բարեկամութիւնը պիտի մնայ անխախտ:

* * *

Անկեղծ են, անշուշտ, այդ հաւաստիացումները: Գերմանիան պէտք ունի Ռուսաստանին եւ այդ պէտքը փոխադարձ է:

Անոնք դեռ ունին ընդհանուր շահեր ու պայքարներ: Եւ երբ Մարօկոյի պատերազմի ընթացքին Փրանս-անգլիական մամուլը շարունակ կը ծանուցէր թէ Աքսէյ Քրիմի բանակում ունեւ բոլշեւիկեան, Թիւրքական եւ գերմանական դործակալներ կան, սպաներ, մարգիչներ, ռազմադէտներ եւայլն, ան միանգամայն չէր սխալուեր: Մարօկոյի մէջ, ինչպէս եւ բոլոր իսլամ երկիրներում ծագած ապստամբութիւններու մէջ, ուղղուած Ֆրանսիայի եւ Անգլիայի դէմ, ապահովաբար, Թիւրքիոյ մատի հետ եւ Ռուսաստանի ու Գերմանիայի մատը կար:

Երեք պետութիւններու միջեւ, հակառակ իտոքոս տարբերութիւններու, կայ հոգեկան խոր ազդակցութիւն: Իւրաքանչիւրի դիւանագիտական յաջողութիւնները կ'ուրախացնեն միւս երկուքին: Գերմանիայի յամառ ընդդիմութիւնը Ֆրանսիոյ պահանջներուն, գերմանական պահանջները հանդէպ Լեհաստանի, Գերմանիայի ամէն մի ճիգը վերստանալու իր դիրքն ու հմայքը միջազգային արէօպաղում՝ ցնծութիւն ու ծափ կը յարուցանեն սովետական եւ քեմալական մամուլի մէջ:

Անգորան կը խանդավառուի տեսնելով իսլամ ցեղերու ըմբոստացումները Անտանտի դէմ, շղթայագերծուած, կամ մեծապէս խրա-